ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 06 » 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000081

Ձեռնարկողը՝ ***«ԵՐԵՎԱՆԻ ԼՈՒՍԱՏԵԽՆԻԿ» ԲԲԸ***
ք. Երևան, Կոմիտասի 59

Գործունեությունը՝ ***Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի 59 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 002681

< 06 > 10 2020թ.

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի 59 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«Երևանի լուսատեխնիկ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

«Երևանի լուսատեխնիկ» ԲԲ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պող. 59 հասցեում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի ա) ենթակետի, դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.342հա, 0.41948հա, 0.01հա, 0.01111հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ բնակելի կառուցապատման:

Նկարագրական մաս

Գործունեության ենթակա տարածքը հարթ է, երկրաբանական տեսակետից բարենպաստ է կառուցապատման համար: Տարածքը ամբողջությամբ ամֆալտապատ է, բուսականությունը բացակայում է:

Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ, Շահսուվարյան, Տիգրանյան փողոցների և Կոմիտասի պողոտայի հատման տեղամասում՝ Փակ շուկայի հարևանությամբ:

Նախկինում տարածքում գտնվել են Երևանի Լուսատեխնիկական գործարանի արտադրական և օժանդակ օբյեկտները:

Հողամասում առկա են քանդման ենթակա 6271.1մ² և 922.5մ² արտադրական շինություններ:

Քանդված շենքերի համալիրը բաղկացած է արտադրական, վարչական և օժանդակ շենքերից: Քանդված օբյեկտները հիմնականում 1-2 հարկանի քարե շինություններ են, որոնք քանդվել են փլեցման եղանակով՝ բացառությամբ, որպես ժամանակավոր ցանկապատ պահպանվող տեղամասերի:

Ապամոնտաժվել է 18մ թռիչքով միահարկ արտադրական մասնաշենքը, որում առկա էր կամրջային ամբարձիչ: Ապամոնտաժվել են նաև բակում առկա մետաղական շրջանակային կառուցվածքը, փոքր ծավալի մետաղական աստիճաններ և հարթակներ:

Բազմաֆունցիոնալ բնակելի համալիրի նախագիծը բաղկացած է վերգետնյա հիմնական 3 մասնաշենքերից (համապատասխանաբար A, B, C) և ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղիից: Բնակելի համալիրում, ըստ նախագծի, նախատեսվում է 763 բնակարան:

Բազմաֆունցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման մակերեսը՝ ըստ վերգետնյա շինությունների, կազմում է 5 673մ² (31,82%), ասֆալտապատ անջրանցիկ ճանապարհների մակերեսը՝ 3 547,37մ² (19,90%), ստորգետնյա շինությունների կառուցապատման մակերեսը՝ 12 500 քմ (70,12%), իսկ հասարակական սպասարկման տարածքների ընդհանուր մակերեսը՝ 10 228մ²:

Բնակելի համալիրի հիմնական մուտքն ապահովված է Ն.Տիգրանյան փողոցից: Նախատեսվում է ունենալ մուտքեր և ելքեր Կոմիտասի պողոտայից և Շահսուվարյան փողոցից: Համալիրի ներսում ավտոճանապարհը նախատեսվում է միակողմանի երթևեկությամբ, շրջանցիկ:

Համալիրի բակային տարածքում նախագծով նախատեսվում է մանկական խաղահրապարակ, սպորտային դաշտեր, տարեցների հանգստի գոտի: Ավտոմեքենաների մուտքը բակային զոնա (բացառությամբ հրշեջ մեքենաների) արգելված է:

Համալիրի A մասնաշենքից (հյուսիս-արևմուտք) նախատեսվում է եռահարկ ստորգետնյա ավտոկայանատեղի՝ թվով 480:

Ավտոկայանատեղին հագեցած է լինելու ավտոլվացման կետերով, տեխսպասարկման հանգույցներով՝ ըստ նորմատիվային պահանջների:

Բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի ±0,000 նիշում նախատեսված են հիմնական մուտքային հանգույցները, վթարային ելքերն ու հասարակական սպասարկման տարածքները՝ բնակիչներից առանձնացված մուտքերով:

Սպասարկման տարածքներում նախատեսվում է ունենալ խանութներ, սրճարաններ, քիմ. մաքրում, լվացքատուն, սպա-կենտրոն, մարզասրահ, օֆիսային տարածքներ, որոնք կապահովեն բնակիչների աշխատանքային զբաղվածությունը, առօրյան և հանգիստը:

Բնակելի համալիրի A մասնաշենքի (հյուսիս-արեվմուտք) հարկայնությունը նախատեսված է 18 վերգետնյա հարկերով, ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի, B մասնաշենքը (հյուսիս-արեվելք)՝ վերգետնյա 20 հարկերով, C մասնաշենքը (հարավ-արեվելք)՝ վերգետնյա 18 հարկերով:

Բոլոր բնակարաններն ապահովված են լինելու հովացման և ջեռուցման համակարգերով, որոնց արտաքին ենթակառուցվածքները քողարկված են լինելու, որպեսզի չխաթարվի կառույցի ճարտարապետական տեսքը:

Կառույցում նախատեսվում են բարձրակարգ վերելակներ: Տանիքը նախատեսվում է իրականացնել հարթ, կազմակերպված ներքին ջրահեռացմամբ:

Բնակելի համալիրի ճակատները նախատեսվում է իրականացնել սրբատաշ քարի (տուֆ, տրավերտին, բազալտ) չոր, օդափոխվող շարվածքներով, կոմպոզիտ ջերմամեկուսիչ նյութերով և բարձրակարգ ձայնա և ջերմամեկուսիչ ապակեպատ հարթություններով:

Բնակելի համալիրի էլեկտրամատակարարման, գազամատակարարման և ջրամատակարարման ու ջրհեռացման համար կառուցապատողը կդիմի, համապատասխանաբար՝ «ՀԷՑ», «Գազպրոմ Արմենիա» և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություններին՝ տեխնիկական պայման ստանալու համար:

Համաձայն նախագծի՝ տաք ջրամատակարարումն իրականացվելու է բնակարաններում նախատեսված կաթսաներից: Կենցաղային կեղտաջրերը հեռացվելու են բակային ցանց, իսկ այնտեղից՝ կոյուղու քաղաքային կոլեկտոր:

Կառուցման ընդհանուր տևողությունը կազմելու է 72 ամիս, 6 օրացուցային տարի, որից 2 ամիսը նախատեսված է նախապատրաստական աշխատանքների համար: Շինարարական աշխատանքներին մասնակցելու են 160 մարդ:

Շինարարության համար անհրաժեշտ շաղախը և բետոնը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից:

Շինարարական աշխատանքերի ընթացքում կառաջանան թափոններ, կենցաղային աղբ՝ 1200-1300 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր և 3956մ^3 շինարարական աղբ (քանդման աշխատանքներ և շինարարության փուլ): Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը՝ պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են շինարարական հրապարակին կից պարզարան (25մ^3), որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 180000մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանութ և 54000մ^3 հետլիցք: Ավելցուկային 126000մ^3 ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Համաձայն նախնական հայտի նախատեսվում է 8605.63մ^2 (48,28%) կանաչապատ մակերես, ինչպես նաև հողածածկ կանաչապատ տարածքներ (տերրասաներ) 4րդ հարկում, որը կազմում է 400մ^2:

Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից մշակվել է համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ: Ըստ կանաչապատման նախագծի, տարածքում տնկվելու են թխկի սրատերև կարմիր՝ 18 հատ, ֆորզիցիա՝ 41, գնդաձև իլենի՝ 36, գնդաձև սամշիտ՝ 29, կատալպա՝ 5, հուդայածառ՝ 9, սյունաձեվ թույա՝ 54, փռվող գիհի՝ 13, ձիակասկ՝ 11, դրախտածառ՝ 5, սակուռա՝ 8, ասպիրակ՝ 61, բարբարիս՝ 21, կուսախաղող՝ 918մ^2, սամշիտ՝ 1222գմ, ծաղկանոց՝ 140մ^2, սիզամարգ՝ 6251մ^2:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա

բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում՝ 2100 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս

Համաձայն նախնական հայտի, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև այլ գերատեսչություններ և Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչությունը:

Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Կառուցապատման աշխատանքների ընթացքում առաջնորդվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական բոլոր նորմերով և պահանջներով, ապահովվելով՝ կառուցապատման խտությունը, հրշեջ մեքենաների համար նորմերով սահմանված անցուղիներ և ճանապարհներ, ինսոլացիոն/բնակարանների լուսավորության մակարդակը, նորմերով սահմանված կանաչապատման մակերեսի խտությունը:
3. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ 09:00-18:00, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:
4. Կառուցապատման աշխատանքների ժամանակ պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն Որոշման և 2002թ. մարտի 6-ի N138 Առողջապահության նախարարության հրամանի պահանջներով:

5. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերն ու կանոնները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջների:
6. Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ չնախատեսված կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան մարմինների թույլատվությամբ:
7. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
8. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման, մոնիթորինգի և մշտադիտարկումների պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումն ու ժամանակացույցերը:
9. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
10. Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումն ու պահպանումը:
11. Պահպանել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Երևանի Լուսատեխնիկ» ԲԲ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պող. 59 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան